Վկաներ

Վկա թիվ 1

Տիրոջ Տունը

Ջոզեֆ Սմիթին պատվիրվեց չցուցադրել ոսկե թիթեղները աշխարհին (տես Վարդապետություն և Ուխտեր 5.3): Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 5.6–10 հատվածները՝ փնտրելով, թե ինչով է Փրկիչը թույլ տվել կիսվել:

Կարող եք նշել մի արտահայտություն, որը Տերը կրկնում է 5, 6 և 7 հատվածներում:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերն ավելի շատ մտահոգված այն մասին, որ մենք հավատանք և ականջ դնենք Իր խոսքերին Մորմոնի Գրքում, քան այն մասին, որ մենք իմանանք, որ թիթեղները գոյություն ունեն:

Անդրադառնալով Մորմոնի Գրքին՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) ուսուցանել է.

Մի աշխարհում, որը սովոր է հիմնվել ապացույցների վրա, Մորմոնի Գրքի ճշմարտացիության և վավերականության ապացույցը հիմնված չէ հնեաբանության կամ մարդաբանության վրա, թեև դա կարող է օգտակար լինել ոմանց համար: Այն հիմնված չէ բառերի ուսումնասիրության կամ պատմական վերլուծության վրա, թեև դա կարող է հաստատող լինել: . . . Մորմոնի Գրքի ճշմարտացիության ստուգումը կայանում է այն կարդալու մեջ: Դա Աստծո գիրքն է: (Գորդոն Բ. Հինքլի «Հավատքի չորս անկյունաքարերը», Ensign, փետրվար 2004, 6)

Մի քանի րոպե տրամադրեք՝ խորհելու Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու և այդ գրքից սովորելու ձեր փորձառության մասին: Խորհեք, թե ինչպես է ձեր ուսումնասիրությունն ազդել ձեր կյանքի վրա: Կարող եք ձեր մտքերից մի քանիսը գրի առնել ձեր օրագրում:

Վկա թիվ 2

Երեք վկաների վկայությունը

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 5.11–15 հատվածները՝ փնտրելով, թե Տերը ում պետք է ի վերջո թույլ տար տեսնել թիթեղները:

- Ի՞նչ տեսաք այս հատվածներում, որը կարող էր զորեղ դարձնել Երեք վկաների վկայությունները:

Ավելի ուշ Մարտին Հարրիսը, Օլիվեր Քաուդերին և Դեյվիդ Ուիթմերը պետք է տեսնեին ոսկե թիթեղները և վկայեին դրանց իրողության մասին: Այս իրադարձության մասին դուք ավելին կիմանաք՝ ուսումնասիրելով Վարդապետություն և Ուխտեր 17 բաժինը:

Անդրադառնալով Երեք վկաներին՝ Առաջին Նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

Նրանց վկայությունը անհերքելիորեն կանգնում է ցանկացած այլ վկայության կողքին: Կարելի է չընդունել այն, սակայն ինչպե՞ս կարելի է բացատրել այն փաստը, որ բարի համբավ ունեցող երեք տղամարդիկ միանում և շարունակ հաստատում են իրենց հրատարակված վկայությունը մինչև իրենց կյանքի վերջը՝ պայքարելով մեծ ծաղրի և այլ անձնական անբարենպաստ պայմանների դեմ: Ինչպես Մորմոնի Գրքի դեպքում, չկա ավելի լավ բացատրություն, քան այն, որ տրված է հենց վկայության մեջ, լրջամիտ հայտարարությունն այն լավ ու ազնիվ մարդկանց, ովքեր ասել են այն, ինչ տեսել են: (Դալլին Հ. Օուքս, «Վկան. Մարտին Հարրիս», Ensign, մայիս 1999, 36)

Կարող եք կարդալ «Երեք վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի սկզբում կամ կազմել այն մարդկանց ցուցակը, որոնք վկայել են ձեզ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Մտածեք, թե ինչպես է նրանց վկայությունն ամրապնդել ձերը:

Վկա թիվ 3

Սուրբ Հոգին

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 5.16 և Մորոնի 10.4–5 հատվածները: Նշեք, թե ինչպես է Աստված բացահայտում Մորմոնի Գրքի ճշմարտացիությունն Իր զավակներին:

- Հոգին ի՞նչ եղանակներով կարող է ինչ-որ մեկին վկայել Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Գլեն Լ. Փեյսը, որը ծառայում էր որպես Նախագահող եպիսկոպոս, ասել է.

> Վկայություն ձեռք բերելու այլ ճանապարհ չկա՝ բացի Սուրբ Հոգու վկայությունից: Ուրիշ ոչ մի բանի վրա հիմնվել չեք կարող: . . . Մենք ունենք բազմաթիվ սուրբգրային օրինակներ, թե որքան անիմաստ կարող է լինել ֆիզիկական դրսևորումը, եթե այն չի ուղեկցվում Հոգու վկայության ստացումով: Դարձը գալիս է ոչ երկնքից եկող ֆիզիկական դրսևորումների միջոցով: (Գլեն Լ. Փեյս, «The Elusive Balance», New Era, մարտ 1989, 49)

Կազմեք պատճառների ցանկը, թե ինչու, ըստ ձեզ, Սուրբ Հոգուց՝ Աստվածության անդամից ստացած վկայությունն ավելի կարևոր է, քան որևէ բանի ճմարիտ լինելու ֆիզիկական ապացույցը: Կարող եք ներառել ցանկացած վկայություն Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելու մասին, որը դուք զգում եք, որ ստացել եք Սուրբ Հոգու միջոցով:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_053-1